

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ո Ւ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆՆԵՐԻ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ N 02551341-ԱՊ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13/07/2020թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Ապահովագիր)՝ ի դեմս **գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի** մի կողմից, և **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ ապահովագրող)՝ ի դեմս **գործադիր տնօրեն Արմինե Մելքոնյանի** մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին 16/01/2020թ.-ին կնքված սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության N 02551341-ԱՊ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. Կողմերը համաձայնվում են Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.
 - 1.1. Պայմանագրի N 3 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:
 - 1.2. Սույն համաձայնագրի 1.1 կետով նախատեսված փոփոխություններով պայմանավորված՝
 - 1.2.1. Պայմանագրի 5.2 կետում «**164,690,000,000 ՀՀ դրամ**» բառերը փոխարինել «**163,890,000,000 ՀՀ դրամ**» բառերով,
 - 1.2.2. Պայմանագրի 6.2 կետում «**525,357,884 ՀՀ դրամ** բառերը փոխարինել «**526,268,547 ՀՀ դրամ**» բառերով:
2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 30/06/2020թ. ժամը 00:01-ից և գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում:
3. Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայնում են, որ սույն համաձայնագիրը տարածվում է միմյանց միջև 2020թ.-ի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
4. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, 0010, Արամի 3, 5
Հեռ.՝ + 374 60 54 00 00
Էլ. փոստ՝ statemedclaims@silinsuracne.net
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Բանկային հաշիվ՝ 163007039676
ՀՎՀՀ՝ 02551341

**Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն**

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3
Հեռ: +374 10 54-40-27
Էլ. փոստ՝ info@moh.am
Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Բանկային հաշիվ՝ 900011105013
ՀՎՀՀ՝ 02507171

**Գործադիր տնօրեն՝
Արմինե Մելքոնյան**

**ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր
քարտուղար՝ Լուսինե Քոչարյան**

Հավելված N 1
 Սոցիալական փաթեթի շահառուների
 առողջության ապահովագրության պայմանագրում
 փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ
 13/07/2020թ. կնքված համաձայնագրի

«Հավելված N 3
 Սոցիալական փաթեթի շահառուների
 առողջության ապահովագրության պայմանագրի»

ՎճԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(«<< դրամ)

Ծրագրային դասիչ	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները											
		մինչև 2020թ. փետրվարի 29-ը	մինչև 2020թ. մարտի 31-ը	մինչև 2020թ. ապրիլի 30-ը	մինչև 2020թ. մայիսի 31-ը	մինչև 2020թ. հունիս 30-ը	մինչև 2020թ. հուլիս 31-ը	մինչև 2020թ. օգոստոսի 31-ը	մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը	մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը	մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը	մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը տարի
1207- 11004	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ	58,384,700	87,577,100	131,356,900	175,136,700	218,916,500	262,696,400	307,007,500	350,863,200	409,331,600	467,800,100	526,268,500	526,268,547

Ապահովագրող

(ստորագրությունը)

Ապահովադիր

(ստորագրությունը)